ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայերի հարաբերություններն ասորիների հետ դարերի խորքից են գալիս։ Դեռ հնագույն շրջանում այդ երկու ժողովուրդներն իրար են հանդիպել Տավրոսյան լեռնաշղթայից հարավ ընկած հայկական նահանգներում՝ Աղձնիքում ու Կորճայքում և ապա դարեր շարունակ, մանավանդ քրիստոնեական միջնադարում, ազդել են միմյանց վրա փոխադարձաբար և ստեղծել շատ բարդ մշակութային փոխհարաբերություններ։

Մնական է, որ այս կարևոր բնագավառը վաղուց պիտի զբաղեցներ հայ պատմաբաններից ու բանասերներից շատերին։ Լավագույն օրինակը Ե. Տեր-Մինասյանի հայ-ասորական եկեղեցական հարաբերություններին նվիրված հայտնի աշխատությունն է։ Սակայն այնքան բազմապիսի են այս հարաբերությունները, որ անհրաժեշտ էր վերսկսել ընդհատված կարևոր աշխատանքը և ընդլայնել ավելի լայն ծրագիր։

Ահա թե ինչու ողջունելի է ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության լույս ընծայած Հ. Մելքոնյանի հայ-ասորական հարաբերություններին նվիրված մենագրությունը[1]։

Աշխատության ամենահաջողված մասերից է «Սոցիալական շարժումների պատմությունից» գլուխը։ Ասորական աղբյուրների (Ափրահատես, Մշիխա Ղեխա, Բովմա Մարդացի և այլք) հարուստ տեղեկությունները հնարավորություն են տվել հեղինակին անապատական շարժման համոզիչ պատկերը տալ՝ բնութագրելով այն որպես յուրատեսակ ընդվզում տիրող իրականության դեմ։ Հայագետները (Ն. Ադոնց և ուրիշներ) հաճախ են ընդգծել Միջագետքի (մանավանդ Եդեսիայի) կարևոր դերը Հայաստանում քրիստոնեության տարածման գործում։ Այս տեսակետը մի անգամ ևս ապացուցվում է անապատական շարժման մասին սույն ուսումնասիրության մեջ եղած փաստարկներով։ Միջագետքում հալածված անապատականները մտնում են Հայաստան և հաստատվում Կորդվաց աշխարհում և Ռշտունիք գավառում։ Անապատականներ են գալիս Հայաստան (Մեծ Հայք) նաև Փոքր Հայքից, որոնք հաստատվում են Նոփք և Աղձնիք նահանգներում։

Սրամիտ է Հ. Մելքոնյանի առաջարկած ստուգաբանությունը Բորբորիտոն անվան համար, որն, ինչպես գիտենք, անապատական շարժման կազմակերպված խմբերից մեկին՝ մծղնեականներին էր տրվում։ Ժխտելով հունարեն Բորբորոս (տիղմ, աղբ) կամ բարբարոս ստուգաբանությունները, նա առաջ է քաշում ասորական ստուգաբանություն՝ բար բարիտ «անապատի որդիներ», որն, ի դեպ, շարժման հենց էությունն է բնորոշում։

Անապատական շարժման մասին խոսելիս հեղինակը կարող էր օգտագործել նաև Աղաթանգեղոսի որոշ մանրամասներ։ Իր գործունեության ընթացքում Գրիգոր Լուսավորիչը վանականների խմբեր է հաստատում տարբեր վայրերում, ինչպես նաև «...լեռնականս, անձաւամուտս և արդելական հաստատէր»[2]։ Իհարկե խոսքը եկեղեցու հսկողության տակ գործող միաբանությունների մասին է, այսուհանդերձ, այնուամենայնիվ լեռնականների մասին հիշատակելը արձագանքն է անապատականների գործունեության, մանավանդ որ Հայաստանի լեռնային պայմաններում անձավներն էին փոխարինում Միջագետքի ու Եղիպտոսի ավազոտ անապատներին։ Դեռ կարելի է ենթադրել, որ Դ դարի սկզբին իր դիրքերն ամրապնդել կամեցող եկեղեցին հավանարար ձգտում էր սիրաշահել անապատականներին։

Հետաքրքրտական է Մար Ավդիի ասորերեն վարքի հայերեն թարգմանությանը (Հակոբ Մծբնացուն վերագրված) հատկացված մասը «Մշակութային կապերը» գլխում։ Ըստ Հ. Մելքոնյանի, Մար Ավդին (կամ Ավդի) ձևից առաջացել է հայկական թարգմանության մեջ գրված Մարուգ անունը։ Այս առթիվ պարզվում է, որ ընդհանրապես Մարուգ (Մարուքէ) անուն չկա ասորերենում (ինչպես ենթադրվում էր) և միայն սույն վարքի հայերեն թարգմանության մեջ պատահարար դո-

---

1 Հ. Մելքոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Ե., 1970։

2 Աղաթանգեղայ պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, պարբ. 441։

յացած մի արվեստական անուն է։ Ահա այս անունն է, որ գտնում ենք հայ մատենագրության մեջ, ընդ որում, ԺԴ—ԺԵ դարերում այդ անունով հիշված են մի քանի անձնավորություններ[3]։ Հետաքրքրական է, որ Ավգինը ոչ թե ասորական. այլ եգիպտական ծագում ունի և կարելի է ասել, որ սա մբակ եգիպտական (զպտական) փոխառյալ անունն է հայերենում։

Մար Ավգինի վարքը հնարավորություն է տալիս որոշ ճշտումներ կատարելու Սասունի Լ Սանասարի վեպի ծագման հարցում։ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի որդիներ Ադրամելեքի ու Սանասարի Հայաստան փախչելու զրույցը ծանոթ էր դեռ Աստվածաշնչից, բայց Սանասարը Սասունի հետ կապող զրույցը ցարդ հայտնի էր ամենաշուտը Ե դարից՝ Մովսես Խորենացու հիշատակությամբ։ Մար Ավգինի վարքը (զրված Դ դարում), ուր հիշված է, թե Սանասարը հիմնեց Սարգուգա քաղաքը և այնտեղ իր հոր պաշտամունքին տաճար կառուցեց, հիմք է տալիս եզրակացնելու, որ ճիշտ չէ այն ենթադրությունը, թե Խորենացու մոտ սոսկ Աստվածաշնչի ազդեցության տակ արվեստականորեն Սանասարի գործունեությունը կապվել է Սասունի հետ։ Հեղինակը ճիշտ է եզրակացնում, որ «այս զրույցը ղալիս է շատ հին դարերից և իր մեջ խտացնում է հայ հին հեթանոսական պաշտամունքի հետ կապված տվյալներ» (էջ 83)։

Գրքում հաճախ է ցույց տրված (օրինակ «Հակոբ Մծբնացին և Նիկիո ժողովը» հատվածում), որ Փավստոս Բուզանդը ձեռքի տակ է ունեցել Մար Ավգինի վարքը։ Ուստի անհրաժեշտ էր, որ հեղինակը մանրամասնորեն քններ այս հարցը բնագրային, ընդհանուր համեմատություններ կատարելով։ Հետաքրքրական է, որ Փավստոսի տեղեկությունները միշտ համընկնում են ասորական աղբյուրների հետ, իսկ Մովսես Խորենացունը՝ ոչ։ Այս առթիվ հարկավոր էր նաև ընդհանրապես դնել Փավստոսի ասորական աղբյուրների հարցը։

Հեղինակն ուսումնասիրել է հայ-ասորական առնչությունների մի կարևոր բնագավառ՝ դրականը (մատենագրականը), անդրադառնալով, մանավանդ, Աստվածաշնչի թարգմանության հարցին։ Նա ձգտում է ցույց տալ հին և նոր կտակարանների հայերեն թարգմանությունների ասորական բնագրերը, քանզի Աստվածաշունչը առաջին հերթին ասորերենից էր հայերեն թարգմանվել և միայն Եփեսոսի ժողովից (431) հետո՝ հունարենից է թարգմանվել, իսկ ասորերենից կատարված թարգմանությունը մոռացության է տրվել։ Բարեբախտաբար Հին Կտակարանի թարգմանությունից մեզ հասել են Մնացորդաց Ա և Բ գրքերի երկու ձեռագիր, որոնք հրատարակել էր Գ. Խալաթյանցը, սակայն ձեռքի տակ ունենալով Աստվածաշնչի հունական յոթանասնից թարգմանությունից կատարված ասորական թարգմանությունը՝ (և ոչ բուն ասորականը՝ Պեշիտտոն) նա ժամանակին վերջնական եզրակացության չի հանգել։ Հ. Մելքոնյանը մի փոքրիկ հատված վերցնելով Խալաթյանցի հրատարակած Մնացորդացի օրինակից, համեմատել է ոչ միայն յոթանասնից թարգմանության, այլև ասորերեն Հին Կտակարանի (Պեշիտտո) հետ և համոզիչ կերպով ցույց տվել, որ Մնացորդացի խնդրո առարկա ձեռագրերը իրոք Աստվածաշնչի նախնական՝ ասորական թարգմանությունից են։

Հայագիտական գրականության մեջ բազմիցս արծարծված՝ Մար Արաս Կատինայի հարցը, բնականաբար, գրախոսվող աշխատության հեղինակի ուշադրությունից չէր կարող վրիպել, և գոյություն ունեցող վարկածները ի մի բերելուց հետո, հեղինակը մնում է բանասերների այն կարծիքին, որ այս ասորի մատենագիրը պատմական անձնավորություն է և ապրել է Դ դարի սկզբին, ճիշտ այն ժամանակ, երբ Մծբինի վրայով Մար Ավգինը, Հակոբ Մծբնացին և Դանիել Ասորին եկել են Հայաստան ու քարոզչական աշխատանքի լծվել։

Ուշադրության են արժանի Թադեոսի ու Սանդուխտի վարքի վերաբերյալ Հ. Մելքոնյանի պրպտումները, սակայն քրիստոնեության առաջին դարերի պատմության հետ սերտորեն կապված այս արժեքավոր վարքը և նրանում եղած նյութը, ըստ երևույթին, հայագիտությունը դեռ ինչպես հարկն է չի ուսումնասիրել և օգտագործել։

Անհրաժեշտ է ընդգծել, որ Թադեոսի ու Սանդուխտի վարքը սերտորեն առնչվում է Ագաթանգեղոսի պատմությանը, թեև վերջինիս մեջ Թադեոսի անունը չի հիշվում։ Թադեոսի վարքն ու Գրիգորի վարքը (Ագաթանգեղոս) ունեն բազմաթիվ զուգահեռներ՝ Թադեոս և Գրիգոր նահատակ քարոզիչներ, Սանդուխտ և Հռիփսիմե հավատարիմ նահատակ կույսեր, Թադեոսին նետեցին առյուծների առջև, իսկ Գրիգորին՝ օձերով լի Խոր Վիրապը ե այլն։ Այս և բազմաթիվ այլ զուգահեռներ մեզ կարող են հիմք տալ եզրակացնելու, որ Գրիգորի վարքը իր կազմավորման ընթացքում անխուսափելիորեն կրել է արդեն Դ դարից բանավոր կամ գուցե գրավոր ձևով գոյություն ունեցող Թադեոսի վարքի ազդեցությունը։

---

3 Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, 268—269։

Այս դրքում և բնդհանրապես նման ուսումնասիրությունների մեջ հայ-ասորական եկեղեցական մասնավորական առնչություններբ սահմանափակվում են մեծ մասամբ Դ դարով, իսկ ինչ վերաբերում է Բ և Գ դարերին, ապա մենք շատ քիչ նյութ ունենք Ադդայի վարդապետություն, Բարդածան և այլնյ։ Անհրաժեշտ էր, որ Հ. Մելքոնյանը ձգտեր թափանցել հայ ժողովրդի պատմության համար այնքան կարևոր և միաժամանակ այնքան մութ Բ և Գ դարերից ներս, հենվելով ասորական մեծ և փոքր վարքագրությունների վրա, քանի որ հայտնի պատմիչների երկերում. ըստ երևույթին, նման նյութը պակասում է։

Հ. Մելքոնյանի այս արժեքավոր մենագրությունը մի անգամ ևս ապացուցում է, որ այսօր հայագիտության մեջ նոր խոսք ասելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև օտար սկզբնաղբյուրները, որոնք, անկասկած, դեռ շատ նյութ կտան հայագիտական բազմատեսակ հարցերի պարզաբանման համար։

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Փետրվարի 23—24-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտական աշխատողների և ասպիրանտների V գիտական նստաշրջանը։ Կարդացվեց 9 զեկուցում։

Կրտսեր գիտաշխատող Մ. Սահակյանի զեկուցումը նվիրված էր հայ ժողովրդի զավակների մասնակցությանը Մեծ հայրենիքի պաշտպանության մարտերին 1941 թ.։ Զեկուցողը նշեց այն ծանր ու դժվարին ուղին, որով անցել են հայ ժողովրդի զավակները Սովետական Միության մյուս ազգերի ներկայացուցիչների հետ ուս-ուսի, պայքարելով մեր երկիրը ներխուժած անարդ թշնամու դեմ։ Նա հատկապես կանգ առավ խիզախ սպայու Սարգիս Հայրապետովի սխրանքի վրա, որը Սովետական Միության հերոս Նիկոլայ Դաստելլոյից երկու օր առաջ Տաուրագեի շրջանում իր այրվող ինքնաթիռը ուղղեց դեպի թշնամու տանկային շարասյունը։

Ասպիրանտ Կ. Հարությունյանը զեկուցեց «Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան լեռնահրաձգային կարմրադրոշ դիվիզիայի մարտական ուղին 1920—45 թթ.» թեմայով։ Ուրվագծելով Հայաստանի տերիտորիայում սովետական իշխանության առաջին տարիներին կազմավորված դիվիզիայի անցած ուղին, Կ. Հարությունյանը հատուկ ուշադրություն դարձրեց Ստալինգրադի Հակատամարտին ունեցած դիվիզիայի մասնակցությանը, որտեղ ցուցաբերած տոկունության ու խիզախության համար նրան շնորհվեց Լենինի շքանշան ու զվարդիական կոչում։

Ասպիրանտ Գ. Առաքելյանը, որը զեկուցեց «Գյուղական արհեստագործությունը Արևելյան Հայաստանում XIX դ. երկրորդ կեսին» թեմայով, նշեց սոցիալ-տնտեսական այն պայմանները, որոնց ազդեցության տակ գյուղական արհեստագործությունը սկսել էր քայքայվել։ Զեկուցողը պատմա-ազգագրական վերլուծության ենթարկեց գյուղական արհեստագործության մի շարք առաջատար ճյուղերը։

Հետաքրքրությամբ լսվեց կրտսեր գիտաշխատող Զ. Գալստյանի «Հայերը Լեհաստանի դիվանագիտական ծառայության մեջ» զեկուցումը։ Նա առաջ քաշեց մի շարք հարցեր, որոնք նորություն էին լեհ-հայկական քաղաքական հարաբերությունների լուսաբանման ուղղությամբ, բերեց լեհական դիվանագիտական ծառայության մեջ աշքի ընկած հայերի գործունեության օրինակներ և շեշտեց այն հանգամանքը, որ տարագիր հայերը հայրենիքի ազատագրության գործը կապում էին եվրոպական երկրների ու Ռուսաստանի օգնության հետ։

Հետաքրքրություն առաջացրեց նաև ասպիրանտ Հ. Սվազյանի «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Կաղանկատվացու» թեմայով զեկուցումը։ Վերլուծելով ու համադրելով պատմիչի հաղորդած տեղեկությունները, Հ. Սվազյանը եզրակացրեց, որ նրա «Պատմությունը» ոչ թե Աղվանից աշխարհի պատմությունն է, այլ «Հայոց արևելից կողմաց» պատմությունը։

«Կախեթի ֆեոդալական իշխանության առաջացման հարցի շուրջը» թեմայով ասպիրանտ Հ. Մկրտումյանի զեկուցումը IX—X դարերի՝ Վրաստանի ֆեոդալական իշխանությունների կազմավորման պատմության դրվագներից էր։ Ներկայացնելով այն նախադրյալները, որոնք հնարավորություն ստեղծեցին Կախեթում կազմակերպել ֆեոդալական իշխանություն, զեկուցողը նշեց, որ այդ իշխանությունը կարողացավ Անդրկովկասում քաղաքական առաջնության համար հայ